Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
հունիսի 1-ի N 615 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2006 թվականի
հուլիսի 20-ի N 1068-Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԻ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏ» ՄԱՐԶԱԿԱՆ ԿՈՉՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԵՎ ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՁԵՎԵՐԸ













ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության միջազգային կարգի սպորտի վարպետ» կրծքանշանը պատրաստված է 29.55 մմ երկարությամբ և 19.14 մմ լայնությամբ արծաթափայլ մետաղից և ունի ուղղանկյունաձև տեսք, որի վերևի աջ անկյունը կորաձև է, իսկ ներքևի ձախ անկյունն ունի ալիքաձև տեսք: Կրծքանշանի վերևի մասում՝ կենտրոնական հատվածում, Հայաստանի

Հանրապետության զինանշանն է: Զինանշանից ներքև՝ 4 տողով, ոսկեգույն տառերով գրված են «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԻ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏ» բառերը (ի դեպ՝ «ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏ» բառերը՝ ավելի մեծ տառաչափով): Կրծքանշանի ներքևի ձախ հատվածում Հայաստանի Հանրապետության ծածանվող, էմալապատ եռագույն դրոշն է: Կրծքանշանի դարձերեսին տեղադրված է մետաղյա պտուտակային ամրակ՝ հագուստին ամրացնելու համար:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏ» ՄԱՐԶԱԿԱՆ ԿՈՉՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԵՎ ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՁԵՎԵՐԸ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ№ ______

շնորհվել է Հայաստանի Հանրապետության
սպորտի վարպետի կոչում

Նախարար՝


Հայաստանի Հանրապետության
սպորտի վարպետի կոչումը
շնորհվել է

Հայաստանի Հանրապետության սպորտի
և երիտասարդության հարցերի
նախարարի 201 թ. ______ ________ ի
թիվ ________ հրամանով

Տրված է 201 թ. __________ _____ ին:




ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության սպորտի վարպետ» կրծքանշանը պատրաստված է 27 մմ երկարությամբ և 25 մմ լայնությամբ արծաթափայլ մետաղից և ունի ուղղանկյունաձև վահանի տեսք: Կրծքանշանի վերևի մասում գրված է «ՀԱՅԱՍՏԱՆ» բառը, որից ներքև՝ արծաթագույն շրջանակով եզերված կարմիր սկավառակի վրա, տեղադրված է Հայաստանի

Հանրապետության զինանշանը: Զինանշանի աջ և ձախ հատվածներում Հայաստանի Հանրապետության ծածանվող, էմալապատ եռագույն դրոշն է: Զինանշանից ներքև՝ երկու տողով, ուռուցիկ գրված են «ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏ» բառերը: Կրծքանշանի ներքևի հատվածը եզերված է ոսկեզօծ դափնու տերևներով: Կրծքանշանի դարձերեսին տեղադրված է մետաղյա պտուտակային ամրակ՝ հագուստին ամրացնելու համար:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՐԶԻԿ»
ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԵՎ ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՁԵՎԵՐԸ




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ No. ___

Ս 1:1



Ս 2:1



ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության առաջին կարգի մարզիկ» կրծքանշանը պատրաստված է 30 մմ երկարությամբ և 20 մմ լայնությամբ գալվանապատ բիմոութ մետաղից: Կրծքանշանի վերևի մասում՝ 7 միլիմետրանոց հարթ մակերեսի վրա, ուռուցիկ ոսկեզօծ տառերով գրված են «ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ» բառերը: Դրանից ներքև Հայաստանի Հանրապետության դրոշի արծնապատ պատկերն է՝ մարզիկին խորհրդանշող վազորդի պատկերմամբ:

Կրծքանշանի ստորին կիսաշրջանաձև եզրը պատված է ոսկեզօծ դափնու տերևներով:

«ՊԱՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՐԶԻԿ» ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՐԳԻ
ՎԿԱՅԱԿԱՆԻ ԵՎ ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՁԵՎԵՐԸ






Մ 1:1



Մ 2:1



ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Պատանեկան կարգի մարզիկի» կրծքանշանը պատրաստված է 30 մմ երկարությամբ և 20 մմ լայնությամբ գալվանապատ բիմոլթ մետաղից: Կրծքանշանի վերևի մասում՝ 7 միլիմետրանոց հարթ մակերեսի վրա, ուռուցիկ ոսկեզօծ տառերով գրված են «ՊԱՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳ» բառերը: Դրանից ներքև՝ արծնապատ կապույտ ֆոնի վրա, մարզիկին խորհրդանշող վազորդի պատկերն է:

Կրծքանշանի ստորին կիսաշրջանաձև եզրը պատված է ոսկեզօծ դափնու տերևներով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ